

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	19
7. ԱՄՓՈՓՈՒՄ	20

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


ՀՀ տնտեսական ակտիվության 2024 թվականի արագ աճի հիմնական գործոնը՝ ոսկերչական գործունեությունը, պահպանել է իր նշանակալի ծավալները նաև ապրիլին, թեև նկատվել է աճի տեմպի որոշակի դանդաղում: Դրանով պայմանավորված, ընթացիկ տարվա ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 10.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 4.9 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ը նույնպես որոշակիորեն նվազել է՝ կազմելով 13.2%, հունվար-մարտի համեմատ դանդաղելով 1.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2024թ. հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.4 և 5.8 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 0.9 և 0.7 տոկոսային կետով: ՏԱՑ-ի դանդաղումն ապրիլին մասամբ պայմանավորված է նաև ծառայությունների աճի տեմպի դանդաղմամբ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-ապրիլին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն¹

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպն էականորեն դանդաղել է: 2024թ. ապրիլին արդյունաբերության աճը կազմել է 16.3%՝ ավելի քան կրկնակի չափով դանդաղելով մարտի նկատմամբ: Արդյունքում, հունվար-ապրիլի աճի տեմպը նույնպես դանդաղել է հունվար-մարտի համեմատ՝ կազմելով 26.8%: Այս դանդաղումը, հավանաբար, ևս պայմանավորված է ոսկերչական գործունեության աճի դանդաղմամբ, սակայն առավել որոշակի տեղեկատվություն առկա կլինի

¹ Արդյունաբերության աճի նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

հաջորդ ամիս՝ արդյունաբերության ենթաոլորտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումից հետո:

Մշակող արդյունաբերության աճը հունվար-մարտին² կազմել է 47.6%՝ գրեթե նույն չափով, ինչ հունվար-փետրվար ամիսներին (47.0%), և ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 29.1 տոկոսային կետով: Ինչպես և նախորդ ամիսներին, այդ աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է ոսկերչական արտադրատեսակների արտադրությամբ: Էական աճեր են առկա նաև էլեկտրական սարքավորանքի և կահույքի արտադրության ենթաճյուղերում՝ համապատասխանաբար 55.4% և 37.7%, սակայն դրանց նպաստումներն արդյունաբերության աճին փոքր են եղել՝ համապատասխանաբար 0.4 և 0.2 տոկոսային կետ:

Մշակող արդյունաբերության ոլորտում ՀՀ տնտեսության համար էական որոշ ենթաճյուղեր շարունակում են անկում ապրել: Այդպիսի ոլորտներից են սննդամթերքի արտադրությունը, որտեղ գրանցվել է 2.0% անկում, ծխախոտի արտադրությունը՝ 3.9%, հագուստի արտադրությունը՝ 8.8%, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ 11.4% և այլն: Շարունակում է անկում ապրել (հունվար-մարտի անկումը՝ 10.8%) նաև հիմնային մետաղների արտադրությունը, որը մշակող արդյունաբերության աճին հակազդել է շուրջ 0.7 տոկոսային կետով: Այսինքն՝ մշակող արդյունաբերության համեմատաբար կայուն և երկարաժամկետ գործունեության տեսակները նվազում են, իսկ կարճաժամկետ գործունեությունն էական աճ է գրանցում՝ վատթարացնելով արդյունաբերության կառուցվածքը:


Հանքարդյունաբերության ոլորտում ցուցանիշները շարունակում են բացասական մնալ՝ հունվար-մարտին գրանցելով 4.6% անկում և ընդհանուր արդյունաբերության աճին հակազդելով 1.0 տոկոսային կետով:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 13.3% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 2.2 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 6.6% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

² Արդյունաբերության ապրիլ ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը տարեսկզբից արագանում է, ինչը պահպանվել է նաև ապրիլին: 2024թ. ապրիլին շինարարության աճը կազմել է 17.8%՝ շուրջ 4.7 տոկոսային կետով արագանալով նախորդ ամսվա համեմատ: Իսկ հունվար-ապրիլ ամիսներին շինարարության աճը կազմել է 13.7%՝ արագանալով 2.0 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը զգալիորեն դանդաղել է: 2024թ. ապրիլին ծառայությունների ոլորտի աճը կազմել է ընդամենը 0.8%՝ նախորդ ամսվա

համեմատ դանդաղելով 3.9 տոկոսային կետով: Կուտակային՝ հունվար-ապրիլ ամիսների աճը ևս որոշակիորեն դանդաղել է՝ կազմելով 3.9%:

Ծառայությունների ոլորտի աճը, ըստ հունվար-մարտ ամսվա տվյալների³, առավելապես պայմանավորված է եղել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտի 19.5% աճով (որը հունվար-փետրվարի համեմատ արագացել է 3.0 տոկոսային կետով), որի նպաստումը ոլորտի աճին կազմել է 5.4 տոկոսային կետ: Ծառայության մյուս ենթաօլորտները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից և տեղեկատվության և կապի ոլորտից, որոնք նվազել են համապատասխանաբար 17.1%-ով և 2.9%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.2 և 0.6 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը ևս դանդաղել է, սակայն դեռևս բավական բարձր մակարդակում է: Առևտրի ոլորտում ապրիլին գրանցվել է բարձր աճ՝ շուրջ 27.2%, սակայն նախորդ ամսվա համեմատ նկատվել է աճի որոշակի դանդաղում՝ շուրջ 3.2 տոկոսային կետով: Հունվար-ապրիլ ամիսների կուտակային աճը կազմել է 26.7%՝ փոքր-ինչ բարձր լինելով հունվար-մարտի համեմատ: Առևտրի աճի տեմպի արագացումը ևս պայմանավորված է ոսկերչական արտադրանքի վերաարտահանման գործընթացով, և այն ևս արտացոլում է այդ գործընթացի աճի տեմպի որոշակի նվազումն ապրիլին:

³ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների, ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁴

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման ծավալն ապրիլին շարունակել է աճել բավական բարձր տեմպով, որը, սակայն, որոշակիորեն դանդաղել է մարտի համեմատ: 2024թ. ապրիլին արտահանման աճը կազմել է 186.5% (2.9 անգամ)՝ որոշ չափով դանդաղելով մարտի՝ 3.0 անգամ աճի համեմատ: Հունվար-ապրիլի կուտակային աճը կազմել է 176.2% (2.8 անգամ): Այս ցուցանիշները պայմանավորված են ոսկու արտահանմամբ, որն ամբողջությամբ փոխել է ՀՀ արտահանման կառուցվածքը:

Հունվար-մարտ ամիսներին «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալը կազմել է 3.3 մլրդ ԱՄՆ դոլար, որը շուրջ 2.0 անգամ ավելի շատ է, քան նախորդ տարվա հունվար-մարտի բոլոր ապրանքների արտահանման ծավալը (շուրջ 1.63 մլրդ ԱՄՆ դոլար):


2024թ. հունվար-մարտ⁵ ամիսների ընթացքում արտահանման աճը գրեթե ամբողջությամբ ապահովվել է վերոհիշյալ՝ «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալի շուրջ 8.7 անգամ աճի հաշվին: Վերջինիս նպաստումը ընդհանուր արտահանման աճին կազմել է 179.5 տոկոսային կետ: Արտահանման էական աճ է գրանցվել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «մանածագործական իրեր» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալներում, որոնք ընդհանուր արտահանման աճին նպաստել են

⁴ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁵ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

համապատասխանաբար 5.6, 1.6 և 1.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, ինչպես և նախորդ ամիս, շարունակել են նվազումներ գրանցվել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «պատրաստի սննդի արտադրանք», «կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալներում, որոնք միասին ընդհանուր արտահանման աճին հակազդել են 16.8 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը, ի տարբերություն արտահանման, էականորեն արագացել է: Ներմուծման ծավալը 2024թ. ապրիլին աճել է 156.6%-ով (2.6 անգամ)⁶՝ նախորդ ամսվա 91.6%-ի դիմաց: Իսկ հունվար-ապրիլ ամիսներին ներմուծման աճը կազմել է 111.7%՝ հունվար-մարտի համեմատ արագանալով 15.8 տոկոսային կետով: Ներմուծման աճի՝ ապրիլ ամսվա կտրուկ արագացման հիմնական գործոնները հնարավոր կլինի վերլուծել ներմուծման ապրիլ ամսվա բացվածքի (ըստ ապրանքատեսակների) հրապարակումից հետո:

2024թ. հունվար-մարտ ամիսների⁶ տվյալներով ներմուծման աճը առավելագույնս պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 7.6 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 84.1 տոկոսային կետով:

Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «մանածագործական իրեր», «հանքահումքային արտադրանք», «քիմիայի և դրա հետ կապված

⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.9, 0.8, 0.6 և 0.4 տոկոսային կետ:


Մնացած ապրանքախմբերի նպաստումները ներմուծման աճին կա՛մ բացասական են, կա՛մ գրեթե զրոյական: Էական նվազում է գրանցվել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի ներմուծման ծավալներում՝ ընդհանուր ներմուծման աճին հակազդելով 10.9 տոկոսային կետով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁷

Անվանական աշխատավարձի աճի տեմպը 2024թ. Էականորեն զիջում է ինչպես նախորդ տարվա աճերին, այնպես էլ տնտեսության աճին: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 8.2%-ով (հունվար-փետրվարի համեմատ մնալով նույնը)՝ կազմելով 282,879 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.3%-ով (հունվար-փետրվարի համեմատ արագանալով 0.1 տոկոսային կետով)՝ կազմելով 313,260 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը շարունակել է աճել ավելի բարձր տեմպով՝ 10.2%-ով (թեև հունվար-փետրվարի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով)՝ կազմելով 208,752 դրամ: Հատկանշական է, որ աշխատավարձերի աճի տեմպն Էականորեն զիջում է նույն ժամանակահատվածի տնտեսական ակտիվության աճին՝ 14.3%-ին, ինչը նույնպես հուշում է, որ տնտեսական աճը ներառական չէ:



⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-մարտին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)





2024թ. տարեսկզբին ՀՀ դրամի փոխարժեքը համեմատաբար կայուն է եղել, իսկ ապրիլին որոշակիորեն արժևորվել է: Դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ ընթացիկ տարվա ապրիլին արժևորվել է՝ մեկ դոլարի դիմաց մարտ ամսվա միջին 400 դրամից ապրիլին դառնալով 391 դրամ: Արդյունքում դանդաղել է նախորդ տարվա համեմատ դրամի արժեզրկված լինելու չափը՝ հունվար-մարտի 2.6%-ից հունվար-ապրիլին դառնալով 2.2%: Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ նույնպես ՀՀ դրամն արժևորվել է ապրիլին, սակայն եվրոյի համեմատ հունվար-ապրիլ ամիսներին միջինում եղել է արժեզրկված (շուրջ 2.4%-ով), իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժևորված (շուրջ 19.7%-ով):


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը որոշակիորեն արագացել է, սակայն դեռևս ցածր մակարդակում է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-ապրիլին կազմել են 863.4 մլրդ դրամ՝ աճելով 9.7%-ով և հունվար-մարտի համեմատ արագանալով 1.0 տոկոսային կետով: Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը որոշակիորեն արագացել է ապրիլին՝ կազմելով 9.3% և նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 0.8 տոկոսային կետով: Սակայն հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձը նախորդ տարվա ցուցանիշում ներառելու պարագայում (քանի որ ընթացիկ տարվա հարկային եկամուտների ցուցանիշում այն ներառված է) աճը կկազմի 6.1%, որն ընդամենը 0.3 տոկոսային կետով է բարձր նախորդ ամսվա ճշգրտված ցուցանիշից և էականորեն զիջում է տնտեսական ակտիվության աճի տեմպին:

Ոչ հարկային եկամուտների գծով գրանցվել է 14.4% աճ, իսկ պաշտոնական դրամաշնորհները շարունակել են նվազել՝ գրանցելով 53.0% անկում:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը⁸, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-ապրիլին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 21.5%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ շուրջ 4.2 անգամ) և շահութահարկի (աճը՝ 3.6%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.0, 2.9 և 0.9 տոկոսային կետ:

Սակայն եթե հիպոթեքի տոկոսավճարների գծով վերադարձները գումարենք 2023թ. եկամտային հարկի ցուցանիշին (այդպիսով դարձնելով համադրելի), ապա եկամտային հարկի գծով մուտքերի աճը կնվազի և կհասնի 1.1%-ի:

Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գծով մուտքերը հունվար-ապրիլ ամիսներին նվազել են՝ ընդհանուր հարկային եկամուտների աճին հակադրելով համապատասխանաբար 1.0 և 0.5 տոկոսային կետով:


⁸ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-ապրիլ		2024թ. հունվար-ապրիլ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	20.0	20.0	9.3	9.3
Ավելացված արժեքի հարկ	20.5	6.0	-3.5	-1.0
Ակցիզային հարկ	33.4	1.6	-9.0	-0.5
Շահութահարկ	46.4	10.0	3.6	0.9
Պետական տուրք	-52.7	-2.9	23.7	0.5
Մաքսատուրք	55.7	1.3	4.9	0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-76.7	-3.5	322.1	2.9
Այլ հարկեր	39.3	1.0	10.0	0.3
Շրջանառության հարկ	32.8	0.9	16.1	0.5
Եկամտային հարկ	17.4	4.1	21.5	5.0
Սոցիալական վճարումներ	47.7	1.5	16.4	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճն էականորեն արագացել է: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-ապրիլ ամիսներին կազմել են 817.1 մլրդ դրամ՝ աճելով 31.9%-ով: Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 34.7%՝ ընդհանուր ծախսերի աճին

նպաստելով 30.4 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծավալի աճի տեմպը նվազել է՝ կազմելով ընդամենը 11.5%:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեն եղել է հավելուրդային: Չնայած ծախսերի բավական արագ աճին, հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի եկամուտները դեռևս գերազանցել են ծախսերի ծավալը, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ 46.3 մլրդ դրամի չափով: Վերջինս բավական ցածր է նախորդ տարվա 170.2 մլրդ դրամից:


5.4. Պետական պարտք

2024թ. ապրիլին ՀՀ պետական պարտքի ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է, սակայն նախորդ ամսվա՝ մարտի համեմատ՝ նվազել: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) ապրիլին որոշակիորեն նվազել է մարտի համեմատ՝ 0.8%-ով, սակայն շարունակել է բարձր մնալ նախորդ տարվա նույն ամսվա մակարդակից շուրջ 10%-ով: Դա պայմանավորված է կառավարության պարտքի վարքագծով, որը նույնպես ապրիլին նվազել է նախորդ ամսվա համեմատ՝ 0.7%-ով և բարձր է եղել նախորդ տարվա ապրիլի մակարդակից 10.9%-ով: Նախորդ ամսվա համեմատ պարտքի նվազումը պայմանավորված է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքի նվազմամբ: Սակայն նախորդ տարվա ապրիլի համեմատ աճը պայմանավորված է ներքին պարտքի աճով, որը կազմել է շուրջ 26.5% (դրամային արտահայտությամբ ներքին պարտքի աճը): Արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) նախորդ տարվա ապրիլի համեմատ նվազել է 0.9%-ով:

2024թ. ապրիլին պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է: Պետական կարճաժամկետ

պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2024թ. ապրիլին կազմել է 9.5%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա մարտի համեմատ՝ 2.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը մարտի համեմատ մնացել է նույն մակարդակում, իսկ նախորդ տարվա ապրիլի հետ հնարավոր չէ համեմատել, քանի որ այդ ժամանակ միջնաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումներ չեն եղել: Նվազել են նաև երկարաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները՝ ապրիլին կազմելով 9.9%՝ նախորդ տարվա ապրիլի 11.9%-ի դիմաց:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Սպառողական գների միջին մակարդակը շարունակում է նվազել: 2024թ. սկզբից գնաճը գտնվում է բացասական տիրույթում: Հիմնականում բացասական տիրույթում են սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների գների աճերը (ապրիլին այս ապրանքախմբի գնանկումը կազմել է 4.5%), իսկ .տրանսպորտի, կրթության և սպասարկման ոլորտի ծառայությունների գներն աճի միտում ունեն, որոնց գծով գների աճերը ապրիլին կազմել են համապատասխանաբար 8.5%, 4.8% և 3.6%:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է և ցածր է մնում նախորդ տարվա տեմպերից: Ընդհանուր ավանդների աճը 2024թ. ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 10.7%, իսկ 2023թ. դեկտեմբերի համեմատ մնացել է գրեթե նույն մակարդակում (աճել է աննշան՝ 0.1%-ով): Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 10.5% և 11.3%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. ապրիլին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 6.1 տոկոսային կետով: Էական է եղել նաև ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստումը, որը, սակայն, նվազել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 2.9 տոկոսային կետ: Տնտեսության այլ հատվածներից ներգրավված ավանդները նույնպես աճել են (բացի այլ ֆինանսական կազմակերպություններից)՝ ընդհանուր ավանդներին ունենալով դրական նպաստում:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը, ի տարբերություն ավանդների աճի, էականորեն բարձր է նախորդ տարվա տեմպերից: 2024թ. ապրիլին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 19.3%-ով՝ նախորդ տարվա աճից բարձր լինելով ավելի քան երկու անգամ: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալը նույնպես աճել է, սակայն ավելի փոքր տեմպով՝ շուրջ 2.2%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 19.9%-ով և 9.2%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 18.9 և 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես տնային տնտեսություններին, այնպես էլ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 10.0 և 9.9 տոկոսային կետ: Միաժամանակ կարելի է նկատել, որ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ծավալների աճի տեմպը աստիճանաբար արագանում է, իսկ իրավաբանական անձանց տրամադրվածներինը՝ դանդաղում, թեև այդ երկու խումբերն էլ շարունակում են մնալ բավական բարձր աճի տիրույթում:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների⁹ շարքում գրեթե բոլոր ուղղություններով առկա է դրական դինամիկա, բացի արդյունաբերության ոլորտից: Վերջին ամիսներին, այդ թվում՝ ապրիլին վարկերի աճին ամենամեծ նպաստումը սկսել է ունենալ սպառողական վարկերի աճը, որը կազմել է 5.4 տոկոսային կետ՝ գերազանցելով հիպոթեքային վարկերի 5.0 տոկոսային կետ նպաստմանը: Այս վարկատեսակների աճերի տեմպերը բավական բարձր են՝ համապատասխանաբար 24.6% և 23.3% ու գերազանցում են տնտեսության մյուս կարևոր փոփոխականների աճի տեմպերին, ինչպիսիք են տնտեսական աճը, աշխատավարձերի աճերը և այլն:

Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալները նույնպես աճում են, բացի արդյունաբերության ոլորտի վարկերից, որոնց ծավալները 2022 թվականից սկսած նվազում են, իսկ 2024թ. ապրիլին դրանց նվազման չափը կազմել է 7.7%՝ պայմանավորված ինչպես մշակող արդյունաբերության (նվազումը՝ 15.6%), այնպես էլ հանքարդյունաբերության (նվազումը՝ 10.7%) ոլորտներում վարկավորման ծավալների նվազմամբ:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է նվազել: 2024թ. հունվար-մարտ ամիսներին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 278.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազելով 49.6%-ով: Հունվար-մարտ ամիսներին նվազել է դրամական միջոցների ինչպես ներհոսքը, այնպես էլ արտահոսքը՝ համապատասխանաբար 23.2%-ով և 9.0%-ով:

¹⁰ Ներկայացված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական ակտիվության աճն ապրիլին դանդաղել է: 2024թ. ապրիլին ՏԱՑ-ը կազմել է 10.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 4.9 տոկոսային կետով, իսկ հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ը նույնպես որոշակիորեն դանդաղել է՝ կազմելով 13.2%: Տնտեսական ակտիվության աճը շարունակում է պայմանավորված լինել ժամանակավոր գործունեություն, որոնք կարող են կտրուկ փոխվել՝ էապես փոխելով մակրոտնտեսական ցուցանիշների պատկերը:

2. Էականորեն դանդաղել է նաև ծառայությունների աճը՝ ապրիլին հասնելով 0.8%-ի: Ծառայությունների աճի դանդաղման պատճառները հնարավոր կլինի վերլուծել ենթաուղորտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումից հետո, սակայն այս երևույթն արդեն իսկ հուշում է տնտեսական ակտիվության նվազման մասին, ինչն ակնհայտ կլինե՞ր ոսկերչական գործունեության բացակայության դեպքում:

3. Հարկային եկամուտների աճի տեմպը շարունակում է ցածր մնալ: 2024թ. հունվար-ապրիլ ամիսներին հարկային եկամուտների աճը կազմել է 9.3%, իսկ հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձը հաշվի առնելու դեպքում՝ 6.1%: Վերջինս բավական ցածր է ՏԱՑ-ից, որի պատճառն այն է, որ հիմնական տնտեսական աճը պայմանավորող գործունեությունը չի հարկվում անհրաժեշտ չափով, սակայն այդ ուղղությամբ կառավարության կողմից քայլեր չեն ձեռնարկվում:

4. Տնային տնտեսությունների վարկերի ծավալը աճում է բավական բարձր տեմպով: 2024թ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված վարկերի (սպառողական և հիպոթեքային վարկերի) ծավալն աճել է 19.7%-ով, ինչն էականորեն գերազանցում է մյուս մակրոտնտեսական ցուցանիշների աճին, մասնավորապես՝ տնտեսական ակտիվության աճին, միջին ամսական աշխատավարձերի, արտերկրից փոխանցվող դրամական միջոցների և այլ կարևոր ցուցանիշների աճերին: Դա նշանակում է, որ վարկային բեռն աճում է դրա սպասարկման հնարավորությունների աճից ավելի արագ տեմպով, ինչը միջնաժամկետում կարող է հանգեցնել ռիսկայնության բարձրացմանը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: